## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 07/80-2/728-16 և հունվարի 18-ի N 6/3-3/837-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Սիսիանի (Նոր Բակ) «Նոհոզշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09806674) 2015 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված N 0484-261015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տաթևի վանական համալիրի հյուսիսային մուտքի աղբյուրի վերանորոգում՝ 57,684,392 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ - 010 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 18-ի N 07/80-2/926-16 և հունվարի 18-ի N 6/3-3/841-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նոհոզշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09806674) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 0479-231015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված աշխատանքների իրականացում՝ 9,622,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 011 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 19-ի N 07/80-2/1194-16 հունվարի 19-ի N 06/3-3/1156-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմենիա Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված N IG-1410 պայմանագրում (2016 թվականի հունվարի 1-ին կնքված N IG-1410/5 համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային ծառայությունների մատուցում՝ 864,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2015 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված N 099/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վառելիքի ձեռքբերում 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 012 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 20-ի N 07/80-2/1452-16 և հունվարի 21-ի N 06/3-3/1535-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անտարես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02519531) 2015 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N 039/SCI-ARM/GEN/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 455,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 013 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 19-ի N 07/80-2/1196-16 և հունվարի 18-ի N 06/3-3/840-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1078-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01520882) «Գեղամա» մասնաճյուղի հետ 2006 թվականի փետրվարի 23-ին կնքված N 317008 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 8,691,942 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00046317) Աբովյանի ԳԳՄ-ի հետ 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N 05108135869 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 6,331,350 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հունվարի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմումով, 2007 թվականի մարտի 29-ին կնքված N 143, 2007 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N 220035586 և 2008 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 112873025 պայմանագրերում նշված գործարքները, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 816,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի.

5) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 083/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 5,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00841437) 2014 թվականի նոյեմբերի 3-ին կնքված N 28 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ավտոմեքենաները ավտոպահեստամասերով և օժանդակ նյութերով ապահովում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 014 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1338-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 19-ի N 07/80-2/1246-16 և հունվարի 18-ի N 06/3-3/862-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1338-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01520882) «Գեղամա» մասնաճյուղի հետ 2006 թվականի փետրվարի 23-ին կնքված N 317008 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 881,995 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00046317) Աբովյանի ԳԳՄ-ի հետ 2013 թվականի հուլիսի 8-ին կնքված N 05108135869 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 1,490,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հունվարի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 40,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմումով, 2007 թվականի մարտի 29-ին կնքված N 143, 2007 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N 220035586 և 2008 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 112873025 պայմանագրերում նշված գործարքները, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 60,000 դրամի չափով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Նախագահ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 015 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1339-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 19-ի N 07/80-2/1247-16 և հունվարի 19-ի N 06/3-3/1157-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1339-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01520882) «Ագստև» մասնաճյուղի հետ 2009 թվականի հուլիսի 31-ին կնքված N 015817 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 2,217,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00046317) Տավուշի ԳԳՄ-ի հետ 2013 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված N 09108137520 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 8,516,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 675,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N 114198702 և 2013 թվականի մարտի 25-ին կնքված N 114198702-S7200171 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի և ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 48,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի հուլիսի 23-ին կնքված N 10541396 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային կապի ծառայությունների մատուցում՝ 520,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 084/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 4,460,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 016 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԱՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1340-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 19-ի N 07/80-2/1192-16 և հունվարի 18-ի N 06/3-3/861-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1340-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01520882) «Արաբկիր» մասնաճյուղի հետ 2003 թվականի հունվարի 24-ին կնքված N 008442 և «Էրեբունի» մասնաճյուղի հետ 2005 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 276397 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1,655,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 011.08.0127, N 012.08.13.0127 և N 015.08.113.01127 պայմանագրերում նշված գործարքներն, որոնցով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 2,550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի հունիսի 1-ին կնքված N 05-11-511 և N 07-64-34-4 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 364,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) կնքված N 116550038, 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմումով, 2004 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 010447655, 2005 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 010634092 և 2010 թվականի հունիսի 8-ին կնքված N 113439520 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1,969,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված N 06-1-31 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 082/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 017 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1341-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 19-ի N 07/80-2/1193-16 և հունվարի 19-ի N 06/3-3/1152-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-1341-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01520882) «Ագստև» մասնաճյուղի հետ 2009 թվականի հուլիսի 31-ին կնքված N 015817 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 151,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00046317) Տավուշի ԳԳՄ-ի հետ 2013 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված N 09108137520 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 231,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 9,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N 114198702, N 113665644 և 2013 թվականի մարտի 25-ին կնքված N 114198702-S7200171, 2015 թվականի նոյեմբերի 17-ին կնքված N 113665644 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի և ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 196,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 081/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 4,320,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. [illegible] ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար[illegible]

[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ - 018 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N Մ-330-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 07/80-2/726 -16 և հունվարի 18-ի N 06/3-3/839-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 22-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հիշում եմ և պահանջում» ծրագրի մասին» N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2015թ. հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2015թ. հունվարի 01-ից մինչև 2016թ. մայիսի 30-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմենիա Թի Վի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529346) 2015 թվականի մարտի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջազգային համաժողովի նկարահանում՝ 13,032,944 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00830786) 2015 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված N 0036/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մուշեղ Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» գրքի անգլերեն տպագրական աշխատանքների իրականացում՝ 2,739,290 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00830786) 2015 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված N 0037/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Խաչիկ Դաշտենցի «Խոդեդան» գրքի տպագրական աշխատանքների իրականացում՝ 3,479,290 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 019 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-991-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 07/80-2/724-16 և հունվարի 14-ի N 06/3-3/620-16 եզրակացությունները ու հաշվի առնելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հիմնադրամի տնօրենի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 16-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի C3 խմբասենյակների հիմնանորգում» ծրագրի մասին» N Մ-991-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 27.12.2015 թվական» բառերը փոխարինել «մինչև 04.04.2016 թվական» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 020 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1182-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 07/80-2/812 -16 և հունվարի 13-ի N 06/3-3/451-16 եզրակացությունները ու հաշվի առնելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հիմնադրամի տնօրենի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի սանհանգույցի և հանդերձարանի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-1182-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 27.12.2015 թվական» բառերը փոխարինել «մինչև 04.04.2016 թվական» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 հունվարի 2016 թվականի N Մ-021-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 07/80-2/730-16 և հունվարի 19-ի N 06/3-3/1168-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից՝ որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի՝ (3 հատ լազերային լույսի աղբյուրներ՝ իրենց սնուցման բաղադրամասերով, 1 տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 2,220 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 180 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2015 թվականի N Մ-022- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 07/80-2/738-16 ու հունվարի 18-ի N 06/3-3/842-16 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հունվարի 14-ի N ԱՄ/22.2/180-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (3870EA մոդելի ախտահանող սարք՝ 1 տեղ, 119 կգ, 4,130 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 475 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-023- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42412-15 և դեկտեմբերի 28 N 06/3-3/42429-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 29 N ԱՍ/22.2/15104-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1217-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է);

2. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (նատրիումի քլորիդ՝ 0.9%,100 մլ՝ 8,300 հատ պլաստիկ տարրայով, 166 արկղ, 1,102 կգ քաշով, 5,295.4 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը [illegible] 3,479.66 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

1/4.19

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի
ղեկավար՝ Մարի-Ժան Պարեի կողմից

## «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը ՀՀ-ում»

### ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | ▪ Բարելավել ընգույար և դեղորայքակայուն տուբերկուլոզի դեպքերի հայտնաբերման գործընթացը: ▪ Առաջարկել դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների որակյալ բուժում՝ հիմնվելով համապարփակ հիվանդակենտրոն մոտեցման վրա և օգտագործելով նրաշխավորված որակով դեղորայք: ▪ Բարելավել վարակի վերահսկման քաղաքականությունն ու փորձը՝ առողջապահական հաստատություններում տուբերկուլոզի տարածումը կրճատելու նպատակով: ▪ Բարելավել ընգույար և դեղորայքակայուն տուբերկուլոզի բուժման հետևողականությունը և կրճատել բուժման ընդհատումների քանակը: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի տուրքերի և մաքսային վճարումների գծով սահմանված արտոնություններից: |
| 3. Բարեգործը | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միություն Ֆրանսիա, Փարիզ 75011, Սեն-Սաբեն փ. 8 |
| 4. Ծրագրի կատարող | Ֆրանսիայի «Բժիշկներ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ ՀՀ, ք. Երևան, Այգեձորի 53բ, ՀՎՀՀ 01538594/ հեռ.՝ (010) 27 60 22) |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Առողջապահական բնագավառ Երևանի քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսեր և Երևան քաղաքի տուբերկուլոզի կաբինետներ, Աբովյան քաղաքի հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր, Քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների հիվանդանոց, Լեռնային Ղարաբաղի, Շիրակի, Լոռու, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի ՏԲ կաբինետներ և ինֆեկցիոն հիվանդանոցներ՝ համագործակցելով Առողջապահության նախարարության /Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի հետ: |
| 6 Ծրագրի բյուջեն | 2013 կատարված՝ 350 827 000 ՀՀ Դրամ<br>2014 կատարված՝ 405 222 000 ՀՀ Դրամ<br>2015 կատարված՝ 317 096 000 ՀՀ Դրամ<br><br>2016թ. նախատեսվող բյուջեն՝ 372 900 000 |

| | | |
|---|---|---|
| | 2017թ. նախատեսվող բյուջեն՝ 150 975 000 ՀՀ դրամ<br><br>**Ընդամենը նախատեսվում է 2016-2017թթ՝ 523 875 000 ՀՀ Դրամ** | |
| 7 Շահառուները (բարեգործություն ստացողները) | Տուբերկուլոզով, ոչ տուբերկուլոզային միկոբակտերիայով* և դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդները և ընտանիքները | |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | 1-ը հունվարի, 2016թ. մինչև 31-ը մարտի, 2017թ. | |
| 9. Ծրագրի գործողությունների նկարագրությունը, ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցները | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր | Ընդամենը՝ 393 250 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ ՀՀ Առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բուժ. աշխատակազմերի վերապատրաստում, տեղեկատվություն, տեղեկացվածության և կոմունիկացիոն ծախսեր | Ընդամենը՝ 16 500 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդների համար, Դեղորայքի ընդունման վերահսկողություն | Ընդամենը՝ 24 750 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ հավելյալ սնունդ խոցելի հիվանդների համար՝ ապահովելու բուժման նկատմամբ հետևողականությունը | Ընդամենը՝ 2 200 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար կազմակերպչական և գրասենյակային ծախսեր | Ընդամենը՝ 46 750 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ ավտոմեքենայի պահեստամասերի ձեռքբերում, փոխադրման և ընթացիկ պահպանման ծախսեր | Ընդամենը՝ 28 600 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ շինարարական-վերանորոգման աշխատանքներ, ծառայություններ, նյութեր և սարքավորումներ Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի համար | Ընդամենը՝ 8 250 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների (բլոր, ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպեր) ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր | Ընդամենը՝ 3 575 000 ՀՀ Դրամ |
| 10. Սույն ծրագրի շրջանակներում գնման գործընթացը և ապրանքների ներմուծումը, ծառայությունների համառոտ նկարագրությունը, քանակը, ծավալը և գինը (եթե կարծում եք, որ պետք է ազատվել հարկերից կոնկրետ գումարի մասով) | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ դեղորայքի, բուժ. և լաբորատոր պարագաների և սարքավորումների ձեռքբերում և ներմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր<br>Ներմուծվող<br>Տեղական | Ընդամենը՝ 393 250 000 ՀՀ Դրամ<br>288 250 000 ՀՀ Դրամ<br>5 000 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ ՀՀ Առողջապահության նախարարության և ԲԱՍ-ի բուժ. աշխատակազմերի վերապատրաստում, տեղեկատվություն, տեղեկացվածության և կոմունիկացիոն ծախսեր | Ընդամենը՝ 16 500 000 ՀՀ Դրամ |

| | | |
|---|---|---|
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ սոցիալ-հոգեբանական անհատական աջակցություն (հիգիենայի պարագաներ, կենսապայմանների բարելավում, հիվանդներին տրամադրվող տրանսպորտային ծախսեր) կարիքավոր հիվանդների համար | Ընդամենը՝ 24 750 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ համնյալ սնունդ խոցելի հիվանդների համար՝ պահովելու բուժման նկատմամբ հետևողականությունը | Ընդամենը՝ 2 200 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ կազմակերպչական և գրասենյակային ծախսեր (գրասենյակի մատակարարում, գազ, էլեկտրաէներգիա, հեռախոսներ) | Ընդամենը՝ 20 000 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ ավտոմեքենայի պահեստամասերի ձեռքբերում, ընթացիկ պահպանման ծախսեր | Ընդամենը՝ 15 000 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ շինարարական-վերանորոգման աշխատանքներ, ծառայություններ, նյութեր և սարքավորումներ Հանրապետական նախատուբերկուլյոզային դիսպանսերի համար | Ընդամենը՝ 8 250 000 ՀՀ Դրամ |
| | **1-ը հունվարի 2016թ - 31-ը մարտի 2017թ** ժամանակահատվածի համար՝ սանիտարահիգիենիկ և վարակի վերահսկման պարագաների (լույս, ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպեր) ձեռքբերում և նորմուծում, դրանց առնչվող ծառայությունների և փոխադրման ծախսեր | Ընդամենը՝ 3 575 000 ՀՀ Դրամ |
| 11. Ծրագրի իրականացմանն առնչվող կազմակերպչական ծախսեր | Ընդամենը՝ 46 750 000 ՀՀ Դրամ | |
| 12. Համագործակցություն պետական և տեղական [illegible] մարմինների, ՀԿ-ների հետ | ՀՀ Առողջապահության նախարարություն, ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ Արդարադատության նախարարություն, Երևանի քաղաքապետարան, Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն, Տուբերկուլոզի ազգային գրասենյակ, Գլոբալ հիմնադրամ, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն, Մարզպետարաններ | |
| 13. [illegible] | Հաշվետվություններ, հանդիպումներ և այցելություններ Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության, ինչպես նաև կազմակերպության համակարգող աշխատակազմի և տեխնիկական ռեֆերենտների մակարդակով | |

[illegible] տուբերկուլոզի [illegible] ախտանշաններ ունեցող հիվանդները միշտ չէ, որ վարակված են տուբերկուլոզով: 2012 թվականի հուլիսին Առողջապահության նախարարությունը ԲՍՄ-ին թույլ տվեց սկսելու ոչ-տուբերկուլոզային միկոբակտերիա ունեցող այն [illegible] բուժումը, որոնք բուժում չեն ստանում ՄԻԱՎ-ի ազգային ծրագրի կողմից. այդ հիվանդների բուժումը [illegible] ՏԲ կաբինետներում ամբուլատոր հիմունքներով այնքան ժամանակ, մինչև կմշակվի պլան նման հիվանդների համար:

Ժան-Ժակ Պիրո
ԲՍՄ ծրագրի ղեկավար, Հայաստանում ներկայացուցիչ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ -024- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 20-ի N 07/80-2/1449-16 և N 06/3-3/1418-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՐԿԱՐԼՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01252368) 2015 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված՝ N 089/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան 42/7 հասցեում կառուցվող ցանկապատի նկատմամբ կատարել շինարարության որակի հավաստման, շինարարական աշխատանքների հսկողության իրականացում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ -025- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն) (1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 20-ի N 07/80-2/1472-16 և հունվարի 19-ի N 06/3-3/1216-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն-93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված՝ N 086/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Կոտայքի մարզի Փյունիկ գյուղի «ՇիինՇողիկ» ճամբարի N 2 մասնաշենքի միջհարկային ծածկի ամրացման աշխատանքների իրականացում՝ 3,953,171 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ - 026 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՌՈՒՑԵՆՔ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 25-ի N 07/80-2/1937-16 և հունվարի 20-ի N 06/3-3/-152116, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի 13-ի N 02/141-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 1/32.2/369-16, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի հունվարի 15-ի N 03/07.1/204-16, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2016 թվականի հունվարի 13-ի N 101/104.3.2/93-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 545,455 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին, Հայաստանի Հանրապետության Վանաձորի քաղաքապետին և Ստեփանավանի քաղաքապետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
30.12.2015թ.

Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նվազեցնել Հայաստանի գյուղական և քաղաքային համայնքների բնակչության խոցելիությունը աղետների նկատմամբ և ամրապնդել նրանց կարողությունները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Ավստրիայի զարգացման գործակալությունը, Ավստրիական և Շվեցարական Կարմիր խաչի ընկերությունները |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևան և Լոռու մարզի գյուղական և քաղաքային համայնքներ:<br>Աղետների ռիսկի նվազեցման բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 545.455 Եվրո - առանց ԱԱՀ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևան, Վանաձոր և Ստեփանավան քաղաքների և Լոռու մարզի 8 գյուղական համայնքների բնակչությունը և կրթական հաստատությունները: Համայնքների ընտրությունը կատարվելու է Լոռու մարզային իշխանության և մարզային Փրկարար ծառայության հետ համատեղ՝ հաշվի առնելով համայնքների՝ աղետների նկատմամբ ռիսկը, աղետների կրկնման հաճախականությունը, հարուցվող վնասները և համայնքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 Դեկտեմբեր 2015 – 30 Դեկտեմբեր 2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝<br>1. Գյուղական և քաղաքային համայնքները հզորացրել են իրենց աղետների ռիսկի կառավարման կարողությունները՝ ելնելով ռիսկի գնահատման վերլուծության արդյունքներից և համապատասխան զարգացման պահանջներից:<br>2. ՀԿԽԸ և այլ ՀԿ-ների և պետական մարմինների միջև համակարգումը և համագործակցությունը ամրապնդվել է ի շնորհիվ համատեղ գործողությունների, քարոզչության և գիտելիքի/ փորձի փոխանակման:<br>3. ՀԿԽԸ զարգացրել է իր գործառնական գիտելիքները և կազմակերպական կարողությունները՝ ԱՌՆ ծրագրերն ընդլայնելու նպատակով: |



| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի շրջանակներում ըստ ակնկալվող արդյունքների նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br><br>**Ակնկալվող արդյունք 1**<br>1.1. Իրականացնել նախնական հետազոտություն հին և նորընտիր թիրախային համայնքներում՝ հաշվի առնելով ընդհանուր աշխարհագրական տվյալները, հիմնական կարիքները, առավել խոցելի խմբերը, և այլն /բյուջեն **1.000 եվրո**, ժամանակահատված՝ 01.12.2015թ.- 29.02.2016թ./:<br>1.2. Իրականացնել Վանաձոր քաղաքի կլիմայի խոցելիության գնահատում և աջակցել դրա արդյունքների վրա կազմված Հարմարվողականության գործողությունների պլանի իրագործմանը /բյուջեն **22.000 եվրո**, ժամանակահատված՝ 01.10.2016թ.- 31.10.2018թ./:<br>1.3. Իրականացնել ընդլայնված խոցելիության և կարողությունների գնահատում (ԽԿԳ) 4 հին և 4 նորընտիր թիրախային գյուղական համայնքներում: Վերլուծել հավաքագրված տվյալները, կազմել և տպագրել ԽԿԳ զեկույց յուրաքանչյուր թիրախային համայնքի համար /բյուջեն **12.800 եվրո**, ժամանակահատված՝ 01.05.2016թ.- 31.12.2016թ./:<br>1.4. Իրականցնել դասընթացներ 4 հին և 4 նորընտիր համայնքներում հիմնված համայնքային կամավորական թիմերի (ՀԿԹ) համար՝ առաջին օգնություն, որոնողափրկարարության հիմունքներ, սոցիալ-հոգեբանական աջակցություն, ԿԽԿՄ աղետներին արձագանքման գործիքները և սկզբունքները, հեռահաղորդակցությունն աղետների ժամանակ և այլ պահանջվող թեմաներով /բյուջեն **25.950 եվրո**, ժամանակահատված՝ 01.03.2016թ.- 30.06.2016թ./:<br>1.5. ՀԿԹ-երին տրամադրել համապատասխան անհատական հանդերձանք և գույք /բյուջեն **52.000 եվրո**, ժամանակահատված՝ 01.04.2016թ.- 31.05.2016թ./:<br>1.6. Մշակել համայնքային աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլաններ յուրաքանչյուր թիրախային համայնքի համար հիմնվելով ԽԿԳ արդյունքների վրա / ժամանակահատված՝ 01.11.2016թ.- 31.05.2017թ./:<br>1.7 Տպագրել և բաշխել տեղեկատվական/իրազեկման և ուսուցողական նյութեր /բյուջեն **106.030 եվրո**, ժամանակահատված՝ 01.06.2016թ. - 30.09.2016թ./:<br>1.8 Բարձրացնել թիրախային գյուղական և քաղաքային համայնքների աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) և կլիմայի փոփոխության հարմարվողականության (ԿՓՀ) վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, հատուկ ուշադրություն ցուցաբերելով դպրոցներին և առավել խոցելի խմբերին (բացահայտված ԽԿԳ և նախնական հետազոտության արդյունքում) Աղետի ընտանեկան պլանների մշակման և «Անվտանգ ընտանիք» մոդելի կիրառման, ինչպես նաև տարբեր մրցույթների և միջոցառումների, ուսուցողական տարահանումների կազմակերպման միջոցով /բյուջեն **91.600 եվրո**, ժամանակահատված՝ 01.07.2016թ.- 31.05.2018թ./: |

1.9 Կազմակերպել դասընթացներ/ աշխատանքային հանդիպումներ Կլիմայի փոփոխության հարմարվողականության, Կենսապայմանների/շրջակա միջավայրի պաշտպանության և Համայնքների քառամյա զարգացման ծրագիր թեմաներով, թիրախային գյուղական համայնքների բնակչության, մարզային և համայնքային իշխանությունների համար /բյուջեն 9.500 եվրո, ժամանակահատված՝ 01.03.2017թ. - 31.05.2018թ./:

1.10 Աջակցել 28 հին և 28 նոր թիրախային դպրոցներին հրդեհային անվտանգության նորմերը և տարահանման ընթացակարգերը արդիականացնելու հարցում՝ տրամադրելով անհրաժեշտ գույք և տարահանման նշաններ /բյուջեն 44.800 եվրո, ժամանակահատված՝ 01.04.2016թ.- 31.05.2016թ./:

1.11 Համայնքային կամավորական թիմերի համար կազմակերպել ուսումնավարժանքներ և մեկ դաշտային ուսումնավարժանք բոլոր 8 թիմերի մասնակցությամբ՝ սերտ համագործակցելով մարզային փրկարար ծառայության հետ /բյուջեն 7.400 եվրո, ժամանակահատված՝ 01.06.2016թ. - 31.10.2018թ./:

1.12 Իրականացնել փոքրամասշտաբ ԱՌՆ, տնտեսական, առողջապահական, բնապահպանական և սոցիալական ծրագրեր ԽԿԳ բացահայտումների հիման վրա՝ սերտ համագործակցելով տեղական և մարզային իշխանությունների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ /բյուջեն 55.600 եվրո, ժամանակահատված՝ 01.03.2017թ. - 31.10.2018թ./:

1.13 Կազմակերպել աշխատանքային հանդիպումներ ուղղված Ստեփանավանի դիմակայունության գործողությունների պլանի թարմացմանը/մշակմանը 2017-2019թթ համար, համապատասխան ուշադրություն ցուցաբերելով նախապես բացահայտված/առաջնայնեցված տնտեսական, առողջապահական և սոցիալական խնդիրներին /բյուջեն 20.300 եվրո, ժամանակահատված՝ 15.01.2017թ. - 30.11.2018թ./:

**Ակնկալվող արդյունք 2**

2.1. Կազմակերպել ծրագրի մեկնարկման հանդիպում ազգային և մարզային մակարդակներում՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ /բյուջեն 2.000 եվրո, ժամանակահատված՝ 15.01.2016թ.- 29.02.2016թ./:

2.2. Բարելավել ԱՌՆ համակարգման մեխանիզմները՝ կազմակերպելով հանդիպումներ ազգային (ԱՌՆ ազգային պլատֆորմ) և մարզային մակարդակներում՝ քննարկելու և հավաքագրելու համապատասխան տվյալներ ԱՌՆ և Կլիմայի փոփոխության վերաբերյալ, ներկայացնելու ծրագրի ընթացքը և ապահովելու պատշաճ համագործակցություն և համակարգում /բյուջեն 1.980 եվրո, ժամանակահատված՝ 01.05.2016թ.- 30.11.2018թ./:

2.3. Ազգային և մարզային մակարդակներում իրականացնել քարոզչություն, առավել խոցելի



խմբերի և դպրոցների, տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և այլ համապատասխան խնդիրներին արձագանքելու համար / բյուջեն 2.960 եվրո, ժամանակահատված՝ 01.12.2015թ.- 30.11.2018թ./:

2.4. Նպաստել և ապահովել ՀԿԽԸ Ստեփանավանի մասնաճյուղի ընդգրկումը Ստեփանավան քաղաքի արտակարգ իրավիճակների արձագանքման հանձնաժողովում որպես անդամ և ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի ընդգրկումը Լոռու մարզի արտակարգ իրավիճակների արձագանքման հանձնաժողովում և Լոռու մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնում որպես անդամ՝ հստակեցնելով նրա դերը և պատասխանատվության շրջանակը մարզային արտակարգ իրավիճակներին արձագանքման համակարգում / բյուջեն 200 եվրո, ժամանակահատված՝ 01.02.2016թ.- 30.11.2016թ./:

2.5. Մշակել և տարածել զեկույց՝ ծրագրի քաղած դասերի և լավագույն փորձի վերաբերյալ /բյուջեն 1.500 եվրո, ժամանակահատված՝ 01.08.2018թ.- 30.11.2018թ./:

2.6. Մշակել և կնքել փոխըմբռնման հուշագիր ՀԿԽԸ, Լոռու մարզպետարանի, Լոռու մարզային փրկարար ծառայության և թիրախային 8 համայնքների հետ, որում հստակ կնշվի յուրաքանչյուր կողմի դերը և պատասխանատվությունը ՀԿԹ-երի հետագա զարգացման և պահպանման հարցում, ինչպես նաև կապահովի ՀԿԹ-երի ինտեգրումը մարզային աղետներին արձագանքման համակարգում /բյուջեն 1.415 եվրո, ժամանակահատված՝ 01.09.2016թ.- 30.11.2016թ./:

2.7. Հիմնել արդյունավետ համագործակցություն/կապ Լոռու մարզային փրկարար ծառայության և ՀԿԹ-երի միջև, ինչպես նաև ապահովել ՀԿԹ-երի ինտեգրումը մարզային աղետների արձագանքման համակարգում, պարբերաբար կազմակերպելով հանդիպումներ, ուսումնական այցեր հրշեջ կայաններ և մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն /բյուջեն 3.000 եվրո, ժամանակահատված՝ 01.05.2016թ.- 30.11.2018թ./:

**Ակնկալվող արդյունք 3**

3.1. Իրականացնել ՀԿԽԸ Ստեփանավանի տարածքային և Լոռու մարզային մասնաճյուղերի ԱՌՆ/ԿՓՀ կարողությունների գնահատում՝ սահմանելու կարողությունների նախնական պատկերը և անհրաժեշտության դեպքում վերնայելու Ծրագրի գործողությունների շրջանակը՝ բացահայտված կարիքներին արձագանքելու նպատակով /բյուջեն 1.500 եվրո, ժամանակահատված՝ 01.02.2016թ.- 31.10.2016թ./:

3.2. Կազմակերպել ԽԿԳ/ՏՍԱՌՆ/ԿՓՀ/ Ծրագրերի մշակում թեմաներով դասընթացներ,

| | | |
|---|---|---|
| | | ՀԿԽԸ Երևանի, Ստեփանավանի և Լոռու մասնաճյուղերի աշխատակազմի և կամավորների համար՝ համայնքային գործողություններում ընդգրկելու համար /բյուջեն **6.000** եվրո, ժամանակահատված՝ 01.05.2016թ.- 30.09.2017թ./:<br><br>3.3. Հզորացնել ՀԿԽԸ Ստեփանավանի տարածքային մասնաճյուղի Աղետներին արձագանքման և հումանիտար աշխատանքների համակարգման կենտրոնի և Լոռու մարզային մասնաճյուղի ԿՓՀ կենտրոնի կարողությունները, և օգտագործելով այդ կարողությունները կազմակերպել դասընթացներ և ուսումնավարժանքներ ՀԿԹ-երի համար, ինչպես նաև կազմակերպել հանրային իրազեկման քարոզարշավներ /բյուջեն **5.000** եվրո, ժամանակահատված՝ 01.02.2016թ. – 30.11.2018թ./:<br><br>Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են **70.920** եվրո, որը ներառում է **53.640** եվրո աշխատավարձերը, **7.200** եվրո ավտոմեքենայի պահպանման և շահագործման, **10.080** եվրո գրենական պիտույքներ, կապի և կոմունալ ծախսեր: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրաջանակներում 8 համայնքային թիմերի համար ձեռք է բերվելու համապատասխան գույք /սաղավարտ, պարան, անհատական հագուստ, ուսապարկ, վրան և այլն/, որի գումարը կազմում է **52.000** եվրո: Տրամադրված գույքը հնարավորություն կընձեռի թիմերին օպերատիվ արձագանքելու տեղական արտակարգ իրավիճակներին: Շահառու 56 դպրոցների հրդեհային անվտանգության նորմերը և տարահանման ընթացակարգերը արդիականացնելու նպատակով տրամադրվելու է անհրաժեշտ գույք, որի գումարը կազմելու է **44.800** եվրո: Բնակչության իրազեկման բարձրացման միջոցառումների իրականացման նպատակով տպագրվելու են մի շարք ուսումնական նյութեր /պաստառներ, բուկլետներ, ձեռնարկներ և այլն/, որոնց գումարը կազմում է **106.030** եվրո: Շահառու 8 համայնքներում իրականացվելու են աղետների ռիսկի նվազեցման և սոցիալական/առողջապահական/տնտեսական ենթածրագրեր.որոնց գումարը կազմում է **55.600** եվրո: Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված գնահատումները, հանդիպումները, դասընթացները, մրցույթները ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար՝ անհրաժեշտ պարագաներ, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որոնց գումարը կազմում է **168.805** եվրո: ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան և Վանաձոր քաղաքներում իրականացվելու են ԱՌՆ/դիմակայունության և ԿՓՀ գործողություններ, որի բյուջեն է **42.300** եվրո: Նախատեսված է նաև ՀԿԽԸ Ստեփանավանի տարածքային և Լոռու մարզային |



| | | |
|---|---|---|
| | | մասնաճյուղերում հիմնված կենտրոնների կարողությունների զարգացման գործողություններ, որի բյուջեն կազմում է **5.000** եվրո: Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են **70.920** եվրո, որը ներառում է աշխատավարձերը, ավտոմեքենայի պահպանման և շահագործման, գրենական պիտույքների, կապի և կոմունալ ծախսեր: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են **70.920** եվրո, որը ներառում է **53.640** եվրո աշխատավարձերը, **7.200** եվրո ավտոմեքենայի պահպանման և շահագործման, **10.080** եվրո գրենական պիտույքներ, կապի և կոմունալ ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության՝ հատկապես նրա Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, Փրկարար ծառայության և Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հետ, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և նրա Երևանի և Լոռու վարչությունների, Լոռու մարզպետարանի, "Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ" հիմնադրամի, 11 թիրախային քաղաքային և գյուղական համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Վերոնշյալ կառույցների, ինչպես նաև մարզում գործող այլ տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ պատշաճ համագործակցություն և համակարգում ապահովելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում կազմակերպվելուն են մարզային համակարգման հանդիպումներ, որը ղեկավարվելու է Լոռու մարզային իշխանությունների, մարզային Փրկարար ծառայության և Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Ավստրիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես կատարվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի միջանկյալ և ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպումներ Երևանում և Լոռու մարզում, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված եռամսյակային համակարգման հանդիպումները նույնպես կլինեն որպես վերահսկողության մեխանիզմ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ - 027 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 14-ի N 07/80-2/639-16 և հունվարի 19-ի N 06/3-3/1154-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրքերի (11 տեղ, 174 կգ ընդհանուր քաշով, 236 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 251,450 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ - 028 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 20-ի N 07/80-2/1451-16 և հունվարի 22-ի N 06/3-3/1823-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Վաչե Մանուկյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված կահույքի (28 տեղ, 1,500 կգ ընդհանուր քաշով, 25,141.08 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,600 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 029 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԾ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱԶՄԱՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 25-ի N 07/80-2/1936-16 և N 06/3-3/2006-16 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի 22-ի N 02/14/567-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 21,083,000 դրամ արժողությամբ «ՀԾ-Ձեռնարկություն համակարգի բազմամասնաճյուղային տարբերակի ներդրման և սպասարկման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08007555) 2015 թվականի դեկտեմբերի 09-ին կնքված՝ N 2015/1209 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգի ներդրման և սպասարկման աշխատանքների իրականացում՝ 21,083,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«26» հունվար 2016 թ.

**ՀԾ-Ձեռնարկություն համակարգի բազմամասնաճյուղային տարբերակի ներդրման և սպասարկման աշխատանքներ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

N 1/1

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում ՀԾ-Ձեռնարկություն համակարգի բազմամասնաճյուղային տարբերակի ներդրման և սպասարկման աշխատանքներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ հաշվապահական ծրագրի ներդնում : |
| 6. | Ծրագրի բյուջեն | 21,083,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 09 դեկտեմբեր 2015թ. – 30 հունիս 2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում ՀԾ-Ձեռնարկություն համակարգի բազմամասնաճյուղային տարբերակի ներդրման և սպասարկման աշխատանքներ՝ 21,083,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 08007555 , ՀՀ, Ք. Երևան, Չարենցի փ. 1)՝ պայմանագիր կնքված 09.12.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 09 դեկտեմբեր 2015թ. – 30 հունիս 2017թ. |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում ՀԾ-Ձեռնարկություն համակարգի բազմամասնաճյուղային տարբերակի ներդրման և սպասարկման աշխատանքները՝ 21,083,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն [illegible] հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ [illegible] ճարտարապետաշինարարական և [illegible] ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կներկայացվի ամփոփ [illegible] |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 030 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 22-ի N 07/80-2/1724-16 և N 06/3-3/1827-16 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի 22-ի N 02/14/568-16 եզրակացությունները,* ***ո ր ո՛ շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 138,655,010 դրամ արժողությամբ «Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի նորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միիրշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930335) 2015 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N 23Շ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 138,655,010 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«26» հունվար 2016 թ.

## Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի նորոգման աշխատանքներ

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի նորոգման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործ (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 138,655,010 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգևորականները և ուսանողները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 29 դեկտեմբեր 2015թ. – 20 դեկտեմբեր 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի նորոգման աշխատանքները՝ 138,655,010 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Միիրշին» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀ 00930335 , ՀՀ, Ք. Երևան, Նորք-Մարաշ 17 փողոց, տուն 72)՝ պայմանագիր կնքված 29.12.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 29 դեկտեմբեր 2015թ. – 20 դեկտեմբեր 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի նորոգման աշխատանքները՝ 138,655,010 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Սևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և [illegible] բաժինների, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո [illegible] |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 031 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՊԱՐԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 25-ի N 07/80-2/1935-16 և հունվարի 22-ի N 06/3-3/1826-16 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի 22-ի N 02/14/569-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 8,597,280 դրամ արժողությամբ «Ապարանքի խաչքարերի կրկնօրինակների հիմքերի կառուցման և խաչքարերի տեղադրման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2015 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված՝ N 21Շ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաչքարերի կառուցման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 8,597,280 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«26» հունվարի 2016 թ.

### Ապարանքի խաչքարերի կրկնօրինակների հիմքերի կառուցման և խաչքարերի տեղադրման աշխատանքներ

### Ծ Ր Ա Գ Ի Ր

մր 1/3

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի տարածքում Ապարանքի խաչքարերի կրկնօրինակների հիմքերի կառուցման և խաչքարերի տեղադրման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 8,597,280 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հոգևորականները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 14 դեկտեմբեր 2015թ. – 15 փետրվար 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի տարածքում իրականացնել Ապարանքի խաչքարերի կրկնօրինակների հիմքերի կառուցման և խաչքարերի տեղադրման աշխատանքներ՝ 8,597,280 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 00801721 , ՀՀ, Ք. Երևան, Ա. Ավետիսյան 118)՝ պայմանագիր կնքված 14.12.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 14 դեկտեմբեր 2015թ. – 15 փետրվար 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Ապարանքի խաչքարերի կրկնօրինակների հիմքերի կառուցման և խաչքարերի տեղադրման աշխատանքներ 8,597,280 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կկազմվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ - 032 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 20-ի N 07/80-2/1453-16 և հունվարի 25-ի N 06/3-3/1948-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Բելգիայի Հայ համայնքը ներկայացնող «Հայք» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (օգտագործված հագուստ՝ 335.2 կգ ընդհանուր քաշով, 120 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ - 033 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 21-ի N 07/80-2/1640-16 և հունվարի 26-ի N 06/3-3/2176-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Պատիվ Ռազմահայրենասիրական» կազմակերպության կողմից «Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (15 արկղ օգտագործված հագուստ և մեկ հատ էլեկտրական հաշմանդամի սայլակ՝ 300 կգ ընդհանուր քաշով, 300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 100 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, հաշմանդամի սայլակը տրամադրվելու է Մխիթար Սերյոժայի Մելքոնյանին (բնակության հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, քաղ. Վեդի, Գայի շենք 5, բն. 18) բաշխման ծրագիրը:

2. «Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Արարատի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# ՈՐՈՇՈՒՄ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 034 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-816-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2016 թվականի հունվարի 25-ի N 33 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք՝ ճանապարհային անվտանգության 2-րդ ծրագիրը (TRACECA)» ծրագրի մասին» N Մ-816-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի ապրիլի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 035 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 26-ի N 07/80-2/1967-16 և հունվարի 22-ի N 06/3-3/1781-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 15-ի « Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
Սեպտեմբեր 2015

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Զարգացնել գյուղական, այդ թվում սահմանամերձ համայնքները: Հիմնել տարատեսակ խմբակներ համայնքների երեխաների համար, օժանդակել գյուղական համայնքներում կրթության որակի բարձրացմանը՝ վերապատրաստելով ուսուցիչներին, ուսանել և նպաստել առողջ ապրելակերպի վարմանը, իրականացնել երեխայի և ընտանիքի աջակցության տարաբնույթ ծրագրեր, ներառյալ հոգեբանական աջակցության և հատուկ մանկավարժական այլ օժանդակության միջոցով, խթանել շահառու համայնքների տնտեսական զարգացումը՝ ձեռնարկատիրական գործունեության բարելավման, բիզնես ծրագրերի նախագծման և համայնքային զարգացման ծրագրերի իրագործման միջոցով: «Սմարթ» ծրագիրը ստեղծում է հնարավորություն երիտասարդների և համայնքների բնակիչների համար զարգացնել գիտելիքները նոր տեխնոլոգիաների օգտագործման բնագավառում և շրջակա միջավայրը ուսումնասիրող գիտություններում: Այն մի հարթակ է որտեղ շահառուները կատարելագործում են իրենց գիտելիքները արհեստների, արվեստների, լեզուների և |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագիրը բարեգործական որակելուց հետո հիմնադրամի կողմից կնքված հարակից գործարքները և ներմուծվող բեռները կստանան հնարավորություն ազատվելու ԱԱՀ-ից, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից ինչը և կօգնի հիմնադրամին ավելի շատ ներդրումներ կատարել համայնքներում: Ներմուծվող բեռները կստանան օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններ: |
| 3 | Բարեգործը | "Children of Armenia Fund" New York, USA. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. |
| 4 | Ծրագիր կատարողը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պող 1, 8-րդ հարկ, 24 սենյակ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը - բնագավառը | ՀՀ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ, Կոտայք մարզերը: Բնագավառը՝ բարեգործական ծրագրեր համայնքների բնակիչներին, այդ թվում նյութեր, պարագաներ, սարքավորումներ և այլ բեռներ ներմուծելու միջոցով: Կրթական, առողջապահական, սոցիալական, տնտեսական և գյուղատնտեսական ծրագրերի իրականացում: Շինարարական նյութերի ձեռքբերում և շինարարություն: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 22.742.000 /քսաներկու միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար/ ԱՄՆ |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ, Կոտայք մարզերը: Ստորև նշված են նախապես ընտրված համայնքները. |
| | | Արմավիրի մարզ. Քարակերտ, Մյասնիկյան, Լեռնագոգ, Դալարիկ, Շենիկ, Հացիկ, Վանանդ, Գետաշեն, Սարդարապատ, Արգինա, Երվանդաշատ, Բագարան, Արմավիր, Տալվորիկ, Արևադաշտ, Արտամետ, Կողբավան, Բաղրամյան համայնքները: |
| 1 | | Արագածոտնի մարզ. Արտենի, Արագածավան, Թլիկ, Գետափ (Թալինի տարածաշրջանի համայնքներ) |

| | | |
|---|---|---|
| | | Լոռու մարզ. Թումանյան, Քարինջ, Մարց, Դսեղ, Դեբետ, Վահագնի, Վահագնաձոր, Ձորագյուղ, Թումանյանի տարածաշրջանի, Ստեփանավանի տարածաշրջանի, Գուգարքի տարածաշրջանի համայնքներ |
| | | Տավուշի մարզ. Նոյեմբերյանի համայնքներ |
| | | Գեղարքունիքի մարզ. Մարտունի, Ճամբարակի տարածաշրջանի համայնքներ |
| | | Սյունիքի մարզ. Գորիս |
| | | Վայոց Ձորի մարզ. Եղեգնաձոր |
| | | Շիրակի մարզ. Արթիկի տարածաշրջանի, Մարալիկի տարածաշրջանի, Ախուրյանի տարածաշրջանի, Ամասիայի տարածաշրջանի համայնքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01/01/2015թ. - 31/12/2018թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **Տնտեսական և գյուղատնտեսական 750.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար:** |
| | | *Փոքր բիզնեսների ֆինանսական աջակցություն: Ագրոդպրոց, որտեղ երեխաները ծանոթանում և փորձարկում են ավանդական ու ժամանակակից գյուղատնտեսության տեխնիկական հնարավորությունները: Դասընթացներ ֆինանսական միջոցների կառավարման վերաբերյալ և այլն:*<br>*ՓՄՁ մասնագիտական աջակցություն*<br>*Գործազուրկ կանանց զբաղվածության ապահովում*<br>*Երիտասարդների շրջանում ձեռներեցության խրախուսում և գյուղատնտեսական գիտելիքների բարձրացում*<br>*Գյուղմթերքների սպառման աջակցություն: Հիմնականում E-Agro համակարգի ներդնում և ուսուցանում: Այն կօգնի գյուղատնտեսին գտնել համագործակցության եզրեր հայ գործարարների հետ:* |
| | | **Առողջապահական - 1.440.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար:** |
| | | *Գյուղական բուժհաստատությունների վերանորոգում և վերազինում*<br>*Դպրոցներում առողջության խրախուսում*<br>*Դպրոցական ճաշարանների հիմնում և սննդի անվճար մատակարարում: Սննդակարգի կազմում մասնագետների խորհրդով: Ճաշարաններում սանիտարական զննումներ և կարգավորումներ և այլն:*<br>*Բերանի խոռոչի հիգիենայի խրախուսում և անվճար ատամնաբուժական ծառայություններ երեխաներին*<br>*ԱԱՊ օղակի բուժաշխատողների վերապատրաստում*<br>*Բնակչության առողջապահական կրթում*<br>*Բնակչության զանգվածային զննումներ* |
| | | **Կրթական - 1.380.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար:** |
| | | *Դպրոցների հիմնանորոգում և կահավորում*<br>*Դպրոցական ադմինիստրատորների և ուսուցիչների վերապատրաստում* |



| | | |
|---|---|---|
| | | *Արտադասարանային խմբակներ*<br>*Ամառային ճամբարներ*<br>*Աշակերտական խորհուրդների հիմնում և աջակցություն*<br>*Անգլերենի խորացված ուսուցում* |
| | | **Սոցիալ-հոգեբանական - 1.080.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար:** |
| | | *Սոցիալական աջակցություն/խորհրդատվություն*<br>*Հոգեբանական ծառայություն*<br>*Դպրոցական հոգեբանների վերապատրաստում*<br>*Լոգոպեդական/հատուկ մանկավարժական ծառայություն*<br>*Ուսման դժվարություններ ունեցող երեխաների աջակցություն*<br>*Մանկան զարգացման կենտրոնների հիմնում և աջակցություն* |
| | | **Ենթակառուցվածքներ - 2.000.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար:** |
| | | *Ամբուլատորիաների վերանորոգում* |
| | | *Սպորտային դահլիճների վերանորոգում* |
| | | *Դասարանների վերանորոգում* |
| | | *Խաղահրապարակների վերանորոգում* |
| | | *Մանկապարտեզների վերանորոգում* |
| | | *Ճաշարանների վերանորոգում* |
| | | **Սմարթ Ծրագիր. Սմարթ կամպուսներ ներառյալ Սմարթ Կենտրոններ, բուժօգնության և բուժկրթության կլինիկաներ, երեխայի խնամքի կենտրոններ, սպորտային խաղահրապարակներ, գյուղատնտեսական համալիրներ, հյուրատներ, ինչպես նաև Սմարթ գրասենյակներ շահառու գյուղերում 15.000.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար:** |
| | | *Արծաթագործություն*<br>*Փայտագործություն և կահույքագործություն*<br>*Գորգագործություն և կարպետագործություն*<br>*Կար ու ձև*<br>*Շինարարություն (սվաղ, զոդում, սալիկապատում)*<br>*Կավագործություն*<br>*Մեքենայի վերանորոգման աշխատանքներ*<br>*Վարսավիրություն*<br>*Ծղոտագործություն* |

| | | |
|---|---|---|
| | | *Օտար լեզուների դասավանդում*<br>*Երաժշտական ուսուցում*<br>*Պարի ուսուցում*<br>*Նկարչություն*<br>*Մեդիա գրագիտություն*<br>*Ծրագրավորման հիմունքներ և ռոբոտաշինություն* |
| | | **Կազմակերպչական - 1.092.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: Մանրամասն ներկայացված է ծրագրի 11 -րդ կետում:** |
| 10 | Ձեռք բերվելիք /ներմուծվող/ ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 4,000,000 /չորս միլիոն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդամթերք, գրասենյակային պիտույքներ, համակարգչային տեխնիկա, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, սանտեխնիկա, շինանյութ, շին. տեխնիկա, գյուղ.տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, շապիկներ, սպորտային համազգեստ, հագուստ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեգործական բեռների ներմուծում 6,000,000 /վեց միլիոն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի շրջանակներում մասնավորապես հագուստ, համակարգչային տեխնիկա, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, գրքեր, գրենական պիտույքներ, շինարարական նյութեր՝ ցեմենտ, ապակի և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել ծառայության մատուցման պայմանագրեր 555 000 /հինգ հարյուր հիսունհինգ հազար/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամի շրջանակներում, մասնավորապես դասընթացների կազմակերպում, տրանսպորտային ծառայություններ, սննդի մատակարարման ծառայություններ, հոգեբանական խորհրդատվության ծառայություններ, բուժ օգնության ծառայություններ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, շինարարական, հսկողական աշխատանքների կատարման համար, առողջապահական, հետազոտական, սոցիալական ծրագրերի իրականացման համար, փորձագետների մասնագիտական վերահսկողական, ուսուցողական ծառայությունների |
| 11 | Կազմակերպչական ծախսեր | Կազմակերպչական ծախսերը 01/01/2015թ.-31/12/2018թ. Ժամանակահատվածի համար կազմում են - 1,092,000 ԱՄՆ դոլար<br>- Տարածքի վարձակալություն գրասենյակի համար 130,000 ԱՄՆ դոլար<br>- Տրանսպորտային միջոցների ձեռք բերում - 162,000 ԱՄՆ դոլար<br>- Աշխատավարձ 417,000 ԱՄՆ դոլար<br>- Վառելիք մեքենաների համար 130,000 ԱՄՆ դոլար<br>- Գործուղումներ 30,000 ԱՄՆ դոլար<br>- Կոմունալ վճարումներ 70,000 ԱՄՆ դոլար<br>- Գրասենյակային պարագաների ձեռք բերում - 18,000 ԱՄՆ դոլար<br>- Միջոցառումների կազմակերպման համար ադմինիստրատիվ ծախսեր 135,000 ԱՄՆ դոլար |



| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: |

Անուշ Եղիգարյան

Գործադիր տնօրեն

Հայաստանի Մանուկներ հիմնադրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 036 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 27-ի N 07/80-2/2518-16 և հունվարի 26-ի N 06/3-3/2169-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հունվարի 26-ի N 04/699-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի հունվարի 27-ի N 1/32.2/879-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հունվարի 27-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/452-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 105,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երեխաների հովանավորություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայփոստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2012 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N PD-03-01-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը փոստային ծառայությունների մատուցում՝ 105,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային
բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
[illegible]

29 դեկտեմբերի 2015թ.

«Փոստային ծառայություններ Երեխաների հովանավորության ծրագրի շրջանակներում»
Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել բարենպաստ միջավայր երեխաների համար՝ համայնքային զարգացման այնպիսի ծրագրեր իրականացնելու միջոցով, որոնցում մեծ դեր ունի երեխաների և նրանց հովանավորների միջև սերտ նամակագրությունը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | 1. «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision UK Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK, հեռախոս՝ +44 1908 841000<br>2. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 հեռախոս՝ +1-888-511-6548<br>3. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland, հեռ.՝: +41-44-510-1579<br>4. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, հեռախոս՝ +33-1-48-03-92-42<br>5. «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Deutschland e.V. Am Houiller Platz 4 61381 Friedrichsdorf հեռախոս՝ 06172 / 763 – 0<br>6. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan հեռախոս՝ 886-2-2175-1995<br>7. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada հեռ. 905-565-6100 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37460491010* |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքները (համայնքների ցանկը կցվում է):<br>Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 105,000,000 (մեկ հարյուր հինգ միլիոն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքներում բնակվող 34,800 երեխաները:<br>Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը հաստատում է տվյալ երեխայի ծնողի համաձայնությունը՝ երեխաներին ՎՎՀ-ի կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրերում ընդգրկելու մասին: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2016թ. – 31 դեկտեմբերի 2018թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակին հասնելու համար սերտ նամակագրական կապ է հաստատվում 209 համայնքներում բնակվող 34,800 երեխաների և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի անհատ հովանավորների միջև, որի արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մարդկանց, ծանոթանալու նրանց մշակույթին և սովորույթներին, իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական աջակցություն ցուցաբերել այդ երեխաների բնակության համայնքներում՝ զարգացման ծրագրերի իրականացման միջոցով: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հովանավորության ծրագրի մեխանիզմը հանդիսանում է ոչ թե անհատական ֆինանսական աջակցություն անհատ երեխաներին, այլ հովանավորներից ստացված ֆինանսական ռեսուրսների միավորում՝ համայնքային զարգացման ծրագրերի իրականացման համար, որից կօգտվեն ոչ միայն երեխաները, ում անունով հովանավորները գումարներ են հատկացնում, այլև համայնքի բոլոր երեխաները: Հովանավորների կողմից ֆինանսավորված համայնքային ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ հովանավորները ստանում են հաշվետվություններից և ավելի հստակ պատկերացում են կազմում իրենց տրամադրած միջոցների շնորհիվ համայնքներում կատարված բարեփոխումների մասին: Նամակագրության թարգմանությունը իրականացվում է Երեխաների հովանավորության ծրագրի համագործակիցների կողմից:<br>Այդ միջոցառումների իրականացման համար տարեկան ծախսվում է 35,000,000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Ծրագրի ընդհանուր բյուջեն երեք տարվա համար կազմում է 105,000,000 (մեկ հարյուր հինգ միլիոն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքները. (see table below) |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 209 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հովանավորության բաժնի մասնագետների կողմից: «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին տարեկան հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքները.

| Գործողություն | Ժամկետ | Գումար (ՀՀ դրամ) (յուր. տարվա համար) | Գումար (ՀՀ դրամ) (3 տարվա համար) |
|---|---|---|---|
| “Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում | 01.01.2016 - 31.03.2016<br>01.01.2017 - 31.03.2017<br>01.01.2018 - 31.03.2018 | 2,047,000 | 6,141,000 |
| “Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում | 01.04.2016 - 30.06.2016<br>01.04.2017 - 30.06.2017<br>01.04.2018 - 30.06.2018 | 20,889,000 | 62,667,000 |
| “Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում | 01.07.2016 - 30.09.2016<br>01.07.2017 - 30.09.2017<br>01.07.2018 - 30.09.2018 | 1,825,000 | 5,475,000 |
| “Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում | 01.10.2016 - 31.12.2016<br>01.10.2017 - 31.12.2017<br>01.10.2018 - 31.12.2018 | 10,239,000 | 30,717,000 |
| Ընդամենը՝ | | 35,000,000 | 105,000,000 |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ազգային տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, գործառնությունների բաժնի ղեկավար

Մաղլեն Մուրադյան

Ն. 1/4

## Համայնքների ցանկն ըստ մարզերի

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| | **Սյունիքի մարզ** |
| 1 | Բռնակոթ |
| 2 | Անգեղակոթ |
| 3 | Գորհայք |
| 4 | Սառնակունք |
| 5 | Շաղաթ |
| 6 | Բալաք |
| 7 | Շաքե |
| 8 | Սիսիան |
| 9 | Աշոտավան |
| 10 | Սալվարդ |
| 11 | Տոլորս |
| 12 | Աղիտու |
| 13 | Լոր |
| 14 | Շամբ |
| 15 | Դարբաս |
| 16 | Հարժիս |
| 17 | Հալիձոր |
| 18 | Շինուհայր |
| 19 | Խոտ |
| 20 | Քարահունջ |
| 21 | Ագարակ |
| 22 | Անտառաշատ |
| 23 | Արծվանիկ |
| 24 | Եղվարդ |
| 25 | Գեղանուշ |
| 26 | Դավիթ Բեկ |
| 27 | Ծավ |
| 28 | Շիկահող |
| 29 | Սրաշեն |
| 30 | Սյունիք |
| 31 | Վերին Խոտանան |
| 32 | Տանձավեր |
| 33 | Օխտար |
| 34 | Աղվանի |
| 35 | Գեղի |
| 36 | Եղեգ |
| 37 | Կապան |
| | **Գեղարքունիքի մարզ** |
| 38 | Արեգունի |
| 39 | Արփունք |
| 40 | Արտանիշ |
| 41 | Ավազան |
| 42 | Այրք |
| 43 | Ազատ |
| 44 | Դարանակ |

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| 45 | Գեղամաբակ |
| 46 | Գեղամասար |
| 47 | Ջաղացաձոր |
| 48 | Ձիլ |
| 49 | Կախակն |
| 50 | Կութ |
| 51 | Կուտական |
| 52 | Նորաբակ |
| 53 | Փամբակ |
| 54 | Շատջրեք |
| 55 | Շատվան |
| 56 | Սոթք |
| 57 | Տորֆավան |
| 58 | Տրետուկ |
| 59 | Ծափաթաղ |
| 60 | Վանևան |
| 61 | Լճավան |
| 62 | Փոքր Մասրիկ |
| 63 | Նորակերտ |
| 64 | Մեծ Մասրիկ |
| 65 | Մաքենիս |
| 66 | Ծովակ |
| 67 | Խաչաղբյուր |
| 68 | Վարդենիս |
| 69 | Կարճաղբյուր |
| 70 | Ակունք |
| 71 | Լուսակունք |
| 72 | Սարուխան |
| 73 | Լանջաղբյուր |
| 74 | Գեղարքունիք |
| 75 | Հայրավանք |
| 76 | Ծաղկաշեն |
| 77 | Բերդկունք |
| 78 | Ծովազարդ |
| 79 | Գանձակ |
| 80 | Լճափ |
| 81 | Գավառ |
| 82 | Աղբերք |
| 83 | Դրախտիկ |
| 84 | Ծովագյուղ |
| 85 | Ճամբարակ |
| 86 | Մարտունի |
| 87 | Շորժա |
| 88 | Թթուջուր |
| 89 | Վահան |
| 90 | Գետիկ |

Ն. 1/4

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| 91 | Այգուտ |
| 92 | Դպրաբակ |
| 93 | Կալավան |
| 94 | Անտառամեջ |
| 95 | Ձորավանք |
| Լոռու մարզ | |
| 96 | Ախթալա |
| 97 | Աքորի |
| 98 | Կաճաճկուտ |
| 99 | Հաղպատ |
| 100 | Արևածագ |
| 101 | Մղարթ |
| 102 | Քարինջ |
| 103 | Ձորկան |
| 104 | Այրում |
| 105 | Ալավերդի |
| 106 | Ագարակ |
| 107 | Ամրակից |
| 108 | Գար-Գառ |
| 109 | Գյուլագարակ |
| 110 | Լեջան |
| 111 | Լոռի-Բերդ |
| 112 | Կուրթան |
| 113 | Կողես |
| 114 | Միխայլովկա |
| 115 | Յաղդան |
| 116 | Հոբարձի |
| 117 | Պուշկինո |
| 118 | Պրիվոլնոյե |
| 119 | Նորաշեն |
| 120 | Սարչապետ |
| 121 | Սվերդլով |
| 122 | Ուռուտ |
| 123 | Վարդաբլուր |
| Շիրակի մարզ | |
| 124 | Գյումրի (Անի, Շերամ, Մուշ, Ավստրիական) |
| 125 | Մարմաշեն |
| 126 | Հովունի |
| 127 | Ամասիա |
| 128 | Աշոցք |
| 129 | Մեծ Սեպասար |
| 130 | Կամո |
| 131 | Բանդիվան |
| 132 | Ցողամարգ |
| 133 | Թավշուտ |
| 134 | Ղազանչի |
| 135 | Քեթի |

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| 136 | Գտաշեն |
| 137 | Արեգնադեմ |
| Երևան | |
| 138 | Քանաքեռ-Զեյթուն համայնք |
| Արագածոտնի մարզ | |
| 139 | Ն. Բազմաբերդ |
| 140 | Կաթնաղբյուր |
| 141 | Դավթաշեն |
| 142 | Աշնակ |
| 143 | Իրինդ |
| 144 | Կաքավաձոր |
| 145 | Ագարակավան |
| 146 | Ն. Սասնաշեն |
| 147 | Վ. Բազմաբերդ |
| 148 | Վ.Սասնաշեն |
| 149 | Մաստարա |
| 150 | Գառնահովիտ |
| 151 | Զովասար |
| 152 | Ոսկեթաս |
| 153 | Կարմրաշեն |
| 154 | Ն.Արթիկ |
| 155 | Սուսեր |
| 156 | Ցամաքասար |
| 157 | Հացաշեն |
| 158 | Արտենի |
| 159 | Զարինջա |
| 160 | Ակունք |
| 161 | Թաթուլ |
| 162 | Եղնիկ |
| 163 | Դաշտադեմ |
| 164 | Թալին |
| 165 | Ապարան |
| 166 | Արագած |
| 167 | Ջրագլուխ |
| 168 | Հարթավան |
| 169 | Լուսագյուղ |
| 170 | Քուչակ |
| 171 | Շենավան |
| 172 | Շողակն |
| 173 | Վարդենիս |
| 174 | Եղիպատրուշ |
| 175 | Երնջատափ |
| 176 | Ծաղկաշեն |
| 177 | Վարդենուտ |
| 178 | Ափնա |
| 179 | Սարալանջ |
| 180 | Նիգավան |

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| 181 | Արայի |
| 182 | Կայք |
| 183 | Թթուջուր |
| 184 | Չքնաղ |
| Տավուշի մարզ | |
| 185 | Արծվաբերդ |
| 186 | Ն.Կ. Աղբյուր |
| 187 | Նավուր |
| 188 | Բերդ |
| 189 | Նորաշեն |
| 190 | Պառավաքար |
| 191 | Տավուշ |
| 192 | Աչաջուր |
| 193 | Դիտավան |
| 194 | Գետահովիտ |
| 195 | Խաշտառակ |
| 196 | Այգեհովիտ |
| 197 | Ազատամուտ |

| ## | Մարզ/ Համայնք |
|---|---|
| 198 | Լուսաձոր |
| 199 | Սարիգյուղ |
| 200 | Սևքար |
| 201 | Բաղանիս |
| 202 | Կոթի |
| 203 | Ոսկեվան |
| 204 | Իջևան |
| 205 | Նոյեմբերյան |
| 206 | Կողբ |
| 207 | Դովեղ |
| 208 | Ջուղթանակ |
| 209 | Բերդավան |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ - 037 - Ա**

**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 21-ի N 07/80-2/1639-16 և հհունվարի 26-ի N 06/3-3/2157-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ-ի մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված համակարգիչների (2 տեղ, 12 հատ, 40 կգ ընդհանուր քաշով, 1,200 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 342.80 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է հիմնադրամի կողմից վերանորոգվող Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ - 038 - Ա**
**քաղ. Երևան**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 22-ի N 07/80-2/1864-16 և հունվարի 26-ի N 06/3-3/2286-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վլադիմիր Գեորգիի Ավագյանի (անձնագիր N 72 4846802, տրված՝ 07.06.2013թ.) կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտարի քաղաքային համայնքի հասցեով ստացված ПАЗ 3206-110-70 մակնիշի ավտոմեքենայի (նույնականացման համարը՝ X1M3206BXF0003397, 5,530 կգ ընդհանուր քաշով, 840,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով) ներմուծումը:

Ավտոմեքենան օգտագործվելու է դպրոց և մանկապարտեզ այցելող երեխաներին Ճարտարի վերին թաղամասից դեպի կենտրոն տեղափոխելու համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 039 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 22-ի N 07/80-2/ 1866-16 և հունվարի 21-ի N 06/3-3/1673-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա և 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2016 թվականի հունվարի 13-ին կնքված N 01/2016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 13-ից մինչև 2017 թվականի հունվարի 31-ը վառելիքի ձեռքբերում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 040 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 25-ի N 07/80-2/2033-16 և հունվարի 22-ի N 06/3-3/1690-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա և 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Դսեղի համայնքի միջնակարգ դպրոցում գտնվող «Սմարթ» սենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 1,800,020 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 041 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 25-ի N 07/80-2/2063-16 և հունվարի 25-ի N 06/3-3/1901-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա և 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված N 20/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նյութերի տպագրում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 042 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 25-ի N 07/80-2/2147-16 և հունվարի 21-ի N 06/3-3/1754-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա և 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2016 թվականի հունվարի 15-ին կնքված N ՋՈ/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արարատի մարզի Ուրցաձոր գյուղում խողովակաշարի և ոռոգման համակարգի խողովակների մոնտաժում իր նյութերով և ապրանքներով՝ 3,652,328 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N ՋՄ-05/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արարատի մարզի Պարույր Սևակ համայնքում խմելու ջրի ջրամատակարարման համակարգի արդիականացում, ինչպես նաև ջրաչափերի դիտահորերի տեղադրում՝ 18,107,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արմսոլար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00462722) 2015 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված N ԱՋՀ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի հավելվածներով սահմանված ջեռուցման համակարգերի և արևային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 31,941,140 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի և Տավուշի մարզպետարաններին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2 փետրվարի 2016 թվականի N Մ- 043 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հունվարի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 1-ի N 07/80-2/3058-16 և հունվարի 26-ի N 06/3-3/2289-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1078-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում և 2016 թվականի հունվարի 1-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 278,004 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2016 թվականի հունվարի 13-ին կնքված N PD-28-01-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը փոստային կապի ծառայությունների վճարովի ծառայության մատուցում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**2 փետրվարի 2016 թվականի N Մ- 044 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հունվարի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1339-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 1-ի N 07/80-2/3059-16 և հունվարի 26-ի N 06/3-3/2193-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-1339-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում և 2016 թվականի հունվարի 1-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 458,004 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2016 թվականի հունվարի 13-ին կնքված N PD-28-01-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը փոստային կապի ծառայությունների վճարովի ծառայության մատուցում՝ 460,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2 փետրվարի 2016 թվականի N Մ- 045 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հունվարի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1340-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 1-ի N 07/80-2/3060-16 և հունվարի 26-ի N 06/3-3/2192-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» N Մ-1340-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում և 2016 թվականի հունվարի 1-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1,524,012 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**29 հունվարի 2016 թվականի N Մ- 046 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1341-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 29-ի N 07/80-2/2676-16 և հունվարի 26-ի N 06/3-3/2285-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» N Մ-1341-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում և 2016 թվականի հունվարի 1-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 556,008 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 047 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N Մ-313-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 27-ի N 07/80-2/2454-16 և հունվարի 25-ի N 06/3-3/2014-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի ամբողջական կահավորում» ծրագրի մասին» N Մ-313-Ա որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ ու 10-րդ կետերում «95,591,000 դրամ» բառերը փոխարինել «101,126,500 դրամ» բառերով.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ- 048 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-730-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 27-ի N 07/80-2/2360-16 և հունվարի 25-ի N 06/3-3/2016-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի Քարվաճառի խաչմերուկի - Չարեքթար 1-ին տեղամասի 12.6 կմ և 2-րդ տեղամասի 9.8 կմ հատվածների կառուցման 2-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագրի մասին» N Մ-193-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2016թ. հոկտեմբերի 31-ը».

2) որոշման վերնագրում, 1-ին կետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ ու 10-րդ կետերում «2-րդ փուլի» բառից հետո ավելացնել «և Մ2 Դադիվանք վանական համալիրի ավտոճանապարհի կառուցման» բառերը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**29 հունվարի 2016 թվականի N Մ-049-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N Մ-591-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հունվարի 27-ի N 07/80-2/2445-16 և հունվարի 22-ի N 06/3-3/1825-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հունվարի 25-ի N ԱՄ/15/603-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում, բուժօգնություն, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և ուսուցում» ծրագրի մասին» N Մ-591-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1215-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ենթադրամաշնորհային ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «57,886,587» թիվը փոխարինել «58, 103,928» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02576479) 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված՝ N ՊԸԱՇՁԲ-ՄՎԱ-ՁԻԱՀ-15/1-1 պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 6,205,804 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սուֆետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07404587) 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված՝ N ԲԸԱՀԾՁԲ-ՁԻԱՀ-ՏՀ-16/1-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման ծառայությունների մատուցում՝ 150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ [illegible]

« [illegible] » [illegible] 2016թ.

# ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ (խմբագրված և լրացված)

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի , տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ<br>1214 Վերներ, Ժնև, Շվեցարիա |
| 4 | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ<br>ք. Երևան, Աճառյան 2<br>ՀՎՀՀ 02504895 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզեր:<br>Ծրագրի բնագավառը՝ առողջապահություն: |
| 6 | Ծրագրի բյուջեն | 58,103,928 (Հիսունութ միլիոն հարյուր երեք հազար ինը հարյուր քսանութ) ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմամբ զբաղվող բժշկական հաստատությունները, ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության խոցելի խմբերը, ՄԻԱՎ վարակով 1470 հիվանդներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 15-ը: |



9 Ծրագրի [illegible] [illegible] Ֆինանսական միջոցների ծախսումը

Այս ծրագիրը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» դրամաշնորհային ծրագրի (բարեգործական է որակվել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի Մ-1074-Ա որոշմամբ, և լրացվել 2013թ. ապրիլի 26-ի թիվ Մ-302-Ա որոշմամբ) շրջանակներում ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ենթադրամաշնորհային ծրագիր:

Ծրագրի շրջանակներում նախատեսված ժամկետներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

| Անվանում | Գնահատված ծախսերը (ՀՀ դրամ) | Ծախսերի իրականացման ժամկետները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2015թ. II եռամսյակ | 2015թ. III եռամսյակ | 2015թ. IV եռամսյակ | 2016թ. I եռամսյակ |
| **Վերապատրաստում,այդ թվում.** | **2186823** | **860553** | **1326270** | **0** | **0** |
| միջազգային կոնֆերանսների, սեմինար-խորհրդակցությունների, հանդիպումների մասնակցության ծախսեր | 2186823 | 860553 | 1326270 | 0 | 0 |
| **Մշտադիտարկում և գնահատում, այդ թվում.** | **1105000** | **273000** | **832000** | **0** | **0** |
| մոնիտորինգային այցեր ԿԻՀ շարժական թիմի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 985000 | 153000 | 832000 | 0 | 0 |
| մոնիտորինգային այցեր մոնիտորինգային խմբի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 120000 | 120000 | 0 | 0 | 0 |
| **Ենթակառուցվածք և այլ սարքավորումներ, այդ թվում.** | **10627549** | **12810** | **1353656** | **831312** | **8429771** |
| Ավտոմեքենայի պահպանման ծախսեր | 840000 | 12810 | 827190 | 0 | 0 |
| Սարքերի պահպանության ծախսեր | 526466 | 0 | 526466 | 0 | 0 |
| Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | 638312 | 0 | 0 | 618312 | 20000 |
| Վերանորոգման աշխատանքներ | 8239201 | 0 | 0 | 0 | 8239201 |
| Տեխնիկական հսկողություն | 170570 | 0 | 0 | 0 | 170570 |
| Շինարարության հետ կապված տուրքերի և թույլատվության ծախսեր | 213000 | 0 | 0 | 213000 | 0 |
| **Կազմակերպչական ծախսեր, այդ թվում.** | **835290** | **113000** | **722290** | **0** | **0** |
| Գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | 835290 | 113000 | 722290 | 0 | 0 |
| **Աշխատանքային ռեսուրսներ, այդ թվում.** | **39626422** | **13106655** | **12405891** | **13842198** | **271678** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աշխատավարձեր | 39626422 | 13106655 | 12405891 | 13842198 | 271678 |
| **Անուղղակի ծախսեր, այդ թվում.** | **2903164** | **0** | **2903164** | **0** | **0** |
| Տեղեկատվական/կրթական նյութեր | 62928 | 0 | 62928 | 0 | 0 |
| Ավտոմեքենայի ապահովագրություն | 74460 | 0 | 74460 | 0 | 0 |
| Բենզին | 2498840 | 0 | 2498840 | 0 | 0 |
| Կապ. հեռախոսավարձ, ինտերնետ, փոստային ծախսեր | 266936 | 0 | 266936 | 0 | 0 |
| **Առողջապահական նյութեր և առողջապահական սարքավորումներ** | **819680** | **0** | **0** | **819680** | **0** |
| Բժշկական սարքավորումների ձեռքբերում | 819680 | 0 | 0 | 819680 | 0 |
| **Ընդամենը 58103928 ՀՀ դրամ** | | | | | |
| **Ծրագրի բյուջեն ըստ եռամսյակների՝** | | | | | |

| **Ժամանակահատված** | **ՀՀ դրամ** |
|---|---|
| 2015թ. II եռամսյակ | 14366018 |
| 2015թ. III եռամսյակ | 19543271 |
| 2015թ. IV եռամսյակ | 15493190 |
| 2016թ. I եռամսյակ (2015թ. ապրիլի 20-ին կնքված Դրամաշնորհի հատկացման N ARM-202-G05-H-00/2015-05 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 2015թ. դեկտեմբերի 23-ի N 2 համաձայնագրի 1.3 կետի հիման վրա ) | 8701449 |

**10. Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են ապրանքների և ծառայությունների ձեռքբերում և մատուցում՝ 58103928 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

| Նկարագրություն | Նախատեսված բյուջե (ՀՀ դրամ) | Նշումներ |
|---|---|---|
| Միջազգային կոնֆերանսների, սեմինար-խորհրդակցությունների, հանդիպումների մասնակցության ծախսեր (արտասահման մեկնող տեղային մեկ մասնագետի համար) | 2186823 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Մոնիտորինգային այցեր ԿՄՀ շարժական թիմի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 985000 | |
| Մոնիտորինգային այցեր մոնիտորինգային խմբի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 120000 | |
| Աշխատանքային ռեսուրսներ (աշխատավարձեր) | 39626422 | |



| Նկարագրություն | Նախատեսված բյուջե (ՀՀ դրամ) | Նշումներ |
|---|---|---|
| «ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | 835290 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Տեղեկատվական/կրթական նյութեր | 62928 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| «ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրային գործառույթների իրականացման նպատակով օգտագործվող 2 ավտոմեքենաների համար բենզին | 2498840 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| «ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2 ավտոմեքենաների ապահովագրություն | 74460 | |
| Ավտոմեքենայի պահպանման ծախսեր | 840000 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Սարքերի պահպանության ծախսեր | 526466 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ | 638312 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Վերանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ | 8239201 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| մասնակի վերանորոգման աշխատանքների գնում, պայմանագիր N ՊԸԱԾՁԲ-ՄՎԱ-ՁԻԱՀ-15/1-1, կնքված 30.12.2015թ. «Արթմաշին» ՍՊԸ-ի (ք. Երևան, Հանրապետության փ., 1-ին նրբ., տուն 8/ա, ՀՎՀՀ՝ 02576479) և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև (կցվում է լուսապատճենը) | 6205804 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Տեխնիկական հսկողություն, այդ թվում՝ | 170570 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման պայմանագիր N ԲԸԱՀԾՁԲ-ՁԻԱՀ-ՏՀ-16/1-1, կնքված 30.12.2015թ. «Սոֆետ» ՍՊԸ-ի (Տավուշի մարզ, գ. Ջուջևան, ՀՎՀՀ՝ 07404587) և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև (կցվում է լուսապատճենը) | 150000 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Շինարարության հետ կապված տուրքերի և թույլատվության ծախսեր | 213000 | |
| Առողջապահական նյութեր և առողջապահական սարքավորումներ | 819680 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Կապ. հեռախոսավարձ, ինտերնետ, փոստային ծախսեր | 266936 | Օգտվելու է հարկային արտոնություններից |

**11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը**

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են կազմակերպչական ծախսեր՝ 1165154 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

| Նկարագրություն | Նախատեսված բյուջե (ՀՀ դրամ) |
|---|---|
| Գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | 835290 |
| Տեղեկատվական/կրթական նյութեր | 62928 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Կապ. հեռախոսավարձ, ինտերնետ, փոստային ծախսեր | 266936 |
| | | **Ընդամենը** | **1165154** |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կամակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի,<br>- ՀՀ ֆինանսների նախարարության,<br>- ՀՀ առողջապահության նախարարության ստորաբաժանումների,<br>- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության,<br>- ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի,<br>- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), այլ միջազգային կազմակերպությունների հետ: | |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատամաք վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղային գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: | |

Ծրագիրը կազմեց՝
ՀՀ առողջապահության նախարարության
«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի
Գլխավոր հաշվապահ
Հեռ. 61-07-30

Ս. Գյուլնազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-050-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 14-ի N 07/80-2/641-16 և հունվարի 18-ի N 06/3-3/890-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի նորակառույց հանրապետական հիվանդանոցի կահավորման համար ձեռք բերված ապրանքների (24 տեղ, 420.7 կգ ընդհանուր քաշով, 127,412.93 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 8,343.91 ռուսական ռուբլի, «ԵՏՄ» բեռ, ցանկը կցվում է) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բեռի ցանկ

1/4.11

| ապրանքի անվանում | փաթեթավորում | չ/մ | քանակ | տեղի քանակ | քաշ բրուտտո կգ | գին ՌԴ ռուբլի |
|---|---|---|---|---|---|---|
| Բժշկական կոստյում | պոլիէթիլեն | հատ | 20 | 1 | 10,1 | 5389,80 |
| Անկողնու սպիտակեղենի կոմպլեկտ | պոլիէթիլեն | հատ | 250 | 19 | 376,9 | 89830 |
| Սպիտակ խալաթ | պոլիէթիլեն | հատ | 20 | 1 | 10,1 | 4491,40 |
| Ղեկավարման բլոկ CTAH 8-32A 110 – 240 V CL 10 3P( max 12) | Ստվարաթղթե արկղ | հատ | 1 | 1 | 0,1 | 3347,71 |
| Օդի ֆիլտր | Ստվարաթղթե արկղ | հատ | 1 | 1 | 3.5 | 2263,90 |
| Յուղի ֆիլտր | Ստվարաթղթե արկղ | հատ | 1 | | | 2058,09 |
| Սեպարատոր | Ստվարաթղթե արկղ | հատ | 1 | | | 6997,49 |
| [illegible] յուղ(COMORO) | Պլաստիկե տարա | հատ | 1 | 1 | 20 | 13034,54 |
| Ընդամենը | | | | 24 | 420,7 | 127412,93 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-051-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 14-ի N 07/80-2/600-16 և հունվարի 18-ի N 06/3-3/892-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապրանքները (118 տեղ, 335.6 կգ ընդհանուր քաշով, 70,251.61 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,656.09 ռուսական ռուբլի, «ԵՏՄ» բեռ, ցանկը կցվում է) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշման պատճենը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բեռի ցանկ

1/7.12

| ապրանքի անվանում | փաթեթավորում | չ/մ | քանակ | տեղի քանակ | քաշ բրուտտո կգ | գին ՌԴ ռուբլի |
|---|---|---|---|---|---|---|
| Ջերմաստիճանի տվիչ | Ստվարաթղթե արկղ | հատ | 1 | | 0,2 | 39103,61 |
| Կցաշուրթի պրոֆիլ No 30 (3Մ) 10 հատ/ փաթեթում | Առանց փաթեթավորման | հատ | 100 | 100 | 70 | 8354 |
| Անկյունակ օդատարների համար | Ստվարաթղթե արկղ | հատ | 1500 | 10 | 152 | 11085 |
| Կցաշուրթի ձգան | Ստվարաթղթե արկղ | հատ | 2100 | 7 | 106,4 | 9807 |
| Ամրացնող (ֆիքսող) ժապավեն | Ստվարաթղթե արկղ | հատ | 40 | 1 | 7 | 1902 |
| **Ընդամենը** | | | | **118** | **335,6** | **70251,61** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-052-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 20-ի N 07/80-2/1450-16 և հունվարի 22-ի N 06/3-3/1689-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարմարե մշակված սալիկները (346.73 քառ. մետր՝ 62 տեղ, 19,900 կգ ընդհանուր քաշով, 179,073.20 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,976,935, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-053-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 14-ի N 07/80-2/602-16 և հունվարի 19-ի N 06/3-3/1017-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված սառնարանային համակարգը (7 տեղ, 2,450 կգ ընդհանուր քաշով, 27,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,223.86 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-054-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 14-ի N 07/80-2/650-16 և հունվարի 18-ի N 06/3-3/838-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտալան ինդաստրիզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00137948) 2015 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատշգամբների տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 1,902,639 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-055-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվարի 14-ի N 07/80-2/648-16 և հունվարի 13-ի N 06/3-3/416-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06602008) 2015 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված՝ N 08122015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 8,758,709 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հունվարի 2016 թվականի N Մ-056-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-483-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

